



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«16» 05 2025թ.



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 125 - 25

Նախաձեռնող՝

«Զանգեզուր պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
ք. Քաջարան, Լեռնագործների 18, 3309

Գործունեությունը՝

Շրջանառու ջրամատակարարման համակարգի
վերակառուցում
Այունիքի մարզ

Առդիր՝ 10 թերթ

«Արժվանիկ» պոչամբար: Սույն նախագծով նախատեսվում է պոչանքի 50%-ը խտացնել ընկերության արտադրական տարածքում՝ վերակառուցվող նոր խտացման տեղամասում, իսկ պոչերի մնացած մասը, գոյություն ունեցող պոչատարով մղել պոչամբար: Նախատեսվում է տեղամաս ուղղել նաև բացահանքի ջրերը, որոնք պարզեցումից հետո մուտք են գործելու ջրի շրջանառու համակարգ: Նախագծի իրականացումը թույլ կտա օգտագործել շրջանառու ջուրը:

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Զանգեզուրի պղնձամոլիբդենային գործարանի արտադրական տարածքում: Գործունեության համար լրացուցիչ հողատարածքի օտարում չի պահանջվում: Խտացուցիչ արտադրամասի կոորդինատները ներկայացված են ստորև.

№	X	Y	№	X	Y
1	8599450.87	4335990.72	19	8599654.33	4335918.47
2	8599462.67	4335979.93	20	8599647.25	4335905.33
3	8599510.72	4335981.68	21	8599635.49	4335905.28
4	8599546.98	4335981.63	22	8599633.66	4335904.96
5	8599554.04	4335981.18	23	8599550.20	4335900.75
6	8599599.53	4335969.74	24	8599546.04	4335900.60
7	8599619.24	4335969.74	25	8599540.19	4335900.35
8	8599619.17	4335972.10	26	8599540.27	4335928.67
9	8599643.18	4335972.36	27	8599555.34	4335936.46
10	8599643.21	4335962.69	28	8599561.13	4335950.33
11	8599655.99	4335962.69	29	8599560.47	4335969.66
12	8599648.50	4335958.46	30	8599574.47	4335970.09
13	8599644.83	4335951.48	31	8599574.70	4335970.98
14	8599644.25	4335950.70	32	8599551.66	4335976.87
15	8599643.66	4335946.73	33	8599460.48	4335975.01
16	8599643.67	4335931.17	34	8599445.76	4335986.55
17	8599646.13	4335927.10	35	8599445.64	4335990.71
18	8599651.92	4335923.69			

Օրոգրաֆիկ տեսակետից պոչերի խտացման նոր տեղամասի տարածքը բնութագրվում է հարթ ռելիեֆով: Ռելիեֆի բարձրության բացարձակ նիշերը տատանվում են 1768.30-1768.43 մետրի սահմաններում, իսկ խյուսատարի խողովակաշարի ուղեգծի տարածքը բնութագրվում է կտրտված ռելիեֆով: Նախագծվող պոչերի խտացման նոր տեղամասի, խյուսատար խողովակաշարի, խյուսաբաշխիչի և ամբողջական տրանսֆորմատորային ենթակայանի տարածքը կազմող գրունտներն ունեն տեխնաոգեն, ալյուվիալ-պրոլյուվիալ, էլյուվիալ և ժայռային ծագում՝ ներկայացված լիցքային, գլաբարա-կոպճային գրունտներով և ժայռային ապարներով, որտեղ հողաբուսական ծածկույթը բացակայում է:

Ջրաերկրաբանական վիճակը տարածքում պայմանավորված է ռելիեֆի խիստ կտրտվածությամբ, լանջերի զառիթափությամբ, ինտրուզիվ ապարների գերակշիռ զարգացմամբ (ճեղքային տիպի ջրերի շրջապտույտով), ջրաբերունների համեմատաբար աննշան հզորությամբ: Այս գործոնները բերում են մակերևութային ջրահոսքի ավելացմանը և ստորերկրյա ջրերի սահմանափակված ձևավորմանը: Ստորերկրյա ջրերը գտնվում են 5.5 մ և ավելի խորությունների վրա՝ կազմված կավավազներից, տարահատիկ ավազներից և կոպճային առաջացումներից: Տեղամասի հիմնական ջրային հոսքը հանդիսանում է Ողջի գետը: Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը բնութագրվում է հիմնականում ծակոտկեն ջրերի առկայությամբ՝ կապված գետաբաժին-ստվածքների հետ: Գործունեության ենթակա տարածքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ և



էկոհամակարգեր:

Պոչերի համար խտացուցիչը նախատեսվում է տեղադրել նախկինում գործակված՝ արագ խտացման խտացուցիչների հարթակում: Նախկին խտացուցիչների աշխատանքը արդյունավետ չլինելու պատճառով ապամոնտաժվել են:

Սույն նախագծի շրջանակներում շրջանառու ջրամատակարարման համակարգի աշխատանքի ապահովման համար նախատեսված են ստորև նշված օբյեկտները

- պոլպանջատիչ №1 (վերակառուցում) և №2,
- պոմպակայան՝ լրացուցիչ աղմուկը մեկուսացնող շերտով,
- խտացուցիչի մասնաշենք՝ ֆլուկուլյանտների պատրաստման արտադրամասով,
- ջրի ռեզերվուար՝ 3000 մ³,
- սնուցման խյուսատար,
- լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան ԼՏԵ/ КТП 10(6)/0,4 кВ,
- խտացուցիչի ցածրավոլտ լրակազմ սարքի (HKY), տեխնոլոգիական պրոցեսի ավտոմատ կառավարման համակարգի (ՏՊԱԿՀ/АСУТП) պահարաններ:

Խտացման տեղամասի արտադրողականությունը կազմելու է 1750 տ/ժ (4700 մ³/ժ), պինդ պարունակությունը՝ 30%: Պարզեցված ջրի ծավալը, որը մտնելու է ջրի շրջանառու համակարգ, կազմելու է 2050 մ³/ժամ:

Պոչերի տեսակարար կշիռը կազմում է 2,7 տ/մ³, պոչերում պատրաստի դասի (-71+0 մկմ) պարունակությունը - 52-57%: Պոչերում քիմիական նյութերի կազմը և բաղադրությունը բերված է ստորև՝ աղյուսակում.

Բաղադրիչի անվանում	Պարունակությունը .%	Բաղադրիչի անվանում	Բաղադրիչի պարունակությունը, %
Mo	0,0051	Na2O	2,42
Cu	0,052	K2O	4,79
S	0,32	TiO2	0,64
Fe	4,96	MnO2	0,091
SiO2	52,50	Zn	0,006
Al2O3	17,6	Pb	0,025
CaO	5,08	Re	0,12 мг/кг (г/т)
MgO	2,51		

Գլխավոր մասնաշենքից պոչերը մուտք են գործում գոյություն ունեցող բաշխիչ բաք, որը նախագծի շրջանակներում վերակառուցվելու է: Բաշխիչ բաքից պոչերի 50%-ը գործող պոչատարով ուղղվելու է պոչամբար, մյուս մասը տալու են խտացման տեղամասում տեղադրվող խտացուցիչ: Նախատեսվում է տեղադրել «Metso Outotec» ֆիրմայի 50մ տրամագծով խտացուցիչ, որը փակվելու է սենդվիչ պանելներով և որտեղ տեղադրվելու են համապատասխան ասպիրացիոն և օդափոխման համակարգեր: Պոչերը ինքնահոս խողովակով մատուցվում են խտացուցիչ, որի հոսքը կարգավորվում է ավտոմատ համակարգով: Խտացված խյուսը «MM400» մակնիշի պոմպի օգնությամբ մղվում է նախագծով նախատեսվող խյուսահոր, որտեղ խառնվելով չխտացված պոչերի մնացած 50% հետ, ուղղվում է պոչամբար: Նախագծվող և գործող խտացուցիչների խտանյութերի պարզվածքն ինքնահոս մատուցվում է պոմպակայանին կից՝ 500մ³ ծավալով բաք, որտեղ ուղղվելու են նաև տեղամասի դրենաժի (թափվածքներ, հիդրոմաքրում) ջրերը: Զրի մակարդակը բաքում կարգավորվելու է ավտոմատ մակարդակի տվիչներով և փականի օգնությամբ: Բաքից ջրերը պոմպերի օգնությամբ տրվելու են հարստացուցիչ ֆաբրիկայում գործող շրջանառու ջրի ռեզերվուար, այնուհետև տեխնոլոգիական պրոցես, կամ անհրաժեշտության դեպքում, պոչամբար ուղղվող պոչերի խտանյութի պոչերի նոսրացման համար: Պոչերի խտությունը կարգավորվում է խտությունը չափող սարքով:



Նախագծով նախատեսվում է պոչատար ուղղվող խյուսի կեսը տալ խտացման, հասցնելով նրա պինդ պարունակությանը մինչև 44%-ը: Պոչամբար ուղղվող պոչերի խտությունը չպետք է գերազանցի 44%-ը, որպիսի չխախտվի հիդրոտրանսպորտի աշխատանքը: Ավել խտության դեպքում իրականացվում է պոչերի նոսրացում: Խտացման տեղամասը և պոմպակայանը տեղադրվելու են փակ շինությունում: Խտացված խյուսը վերադարձվելու է պոչատար, իսկ պարզվածքն ուղղվելու է ջրի շրջանառու համակարգ:

Խտացուցիչի արդյունավետ աշխատանքի և պոչային պինդ մասի արագ նստեցման համար նախատեսվում է խյուսին ավելացնել 6գ/տ «Praestol 2530» մակնիշի 0.1%-նոց լուծույթ ֆլուկուլյանտ, որն իրենից ներկայացնում է անիոննա տիպի մակերևութային ակտիվ նյութ (պատկանում է վտանգավորության IV դասին): Ֆլուկուլոնտը նախատեսվում է արտադրական տարածք բերել 25կգ տարողությամբ պոլիէթիլենային պարկերով՝ չոր վիճակում: Տարեկան ծախսը կազմում է 85,7տ: Խտացման տեղամասում նախատեսված է պահեստ՝ եռօրյա պաշարի տեղադրման համար:

Արտադրամասի շինարարության տևողությունը 12 ամիս է: Շինարարության ընթացքում արտադրական և տնտեսակենցաղային կարիքների կարիքների համար ժամանակավոր ջրամատակարարումն իրականացվում է ձեռնարկության ցանցից:

Բոլոր մեքենաները, որոնք մտնում են շինհրապարակ, տարածքից դուրս գալիս անիվները պետք է լվացվեն: Այդ միջոցառումը թույլ կտա խուսափել հարակից տարածքների աղտոտումից: Անիվների լվացման հանգույցը իրենից ներկայացնում է էստակադա, որը տեղադրված է բետոնյա հարթակի վրա: Լվացման հարթակը պետք է ունենա 2-3 % թեքություն՝ դեպի լվացված ջրերի հավաքման ավազան: Ջրահեռացման իքնահոս խողովակի տրամագիծը պետք է լինի 150մմ-ից ոչ պակաս, թեքությունը՝ 3 %: Անիվների լվացման հանգույցն ունենալու է շրջանառու ջրի համակարգ: Լվացման ջրերը ուղղվում են հաջորդաբար տեղադրված պարզեցման ավազաններ, որոնց պարզվածքը պոմպի օգնությամբ տալիս են լվացման տեղամաս: Ավազանների նստվածքը ժամանակ առ ժամանակ հանում են, հեռացնում պոչատար:

Հողային և հետլիցքի աշխատանքներից մթնոլորտ է արտանետվում անօրգանական փոշի՝ 70-20% SiO₂ պարունակությամբ: Տեխնիկայի շահագործման՝ ներքին այրման շարժիչի աշխատանքի արդյունքում մթնոլորտ են արտանետվում վնասակար գազեր: Այս արտանետումների աղբյուրները կրում են անկազմակերպ բնույթ: Հաշվետվությունում ներկայացվել են շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակական հաշվարկներ, որի համար օգտագործվել է միաժամանակ շահագործվող տեխնիկայի քանակը՝ հիմնական աշխատանքային ժամանակահատվածի համար: Մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքների համաձայն, բոլոր աղտոտող նյութերի կոնցենտրացիաները չեն գերազանցում սահմայային թույլատրելի արտանետումների նորմերը: Քաջարանի խտացուցիչի շինարարության հետևանքով արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը գնահատվել է տարեկան ≈9363,1 դրամ:

Շինարարության փուլում աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում անիվային բարձիչը և էլեկրատոփանման սարքը, որոնց աշխատանքը ժամանակավոր է իրականացվում են ցերեկվա ժամերին, օրական՝ 8 ժամ: Երկու աղմուկի աղբյուրների աղմուկի մակարդակը՝ LAէկվ, 3մ հեռավորության վրա անիվային բարձիչի համար կկազմի 85-90 դԲ, իսկ էլեկրատոփանման սարքի աղմուկը՝ LAէկվ, 7,5 հեռավորության վրա կկազմի առավելագույնը 68դԲ: Տեխնիկական սարքավորումները միաժամանակ չեն աշխատելու: Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը: Կոմբինատի պարիսպը, շինությունների պատերը, առկա կանաչապատ տարածքը հանդիսանում է աղմուկից պաշպանիչ էկրան: Ցանկապատի նյութի խտությունը $\rho = 200 \text{ կգ/մ}^3$: Աղմուկից պաշպանիչ էկրան է հանդիսանում նաև շինության պատերը, ռաշտայանիչ



էկրանի արդյունավետությունը որոշվել է հաշվարկի միջոցով: Համաձայն հաշվարկների արդյունքի աղմուկի մակարդակը 100 մ հեռավորության վրա աղմուկը կնվազի 38 դԲ: Աղմուկի մակարդակը արդեն իսկ շինհրապարակի տարածքում նորմի մեջ է, մինչև բնակելի տարածք աղմուկը չի հասնի: Որպես լրացուցիչ միջոցառում, նախատեսվում է իրականացնել ծառատնկում՝ արտադրական տարածքի և բնակելի շենքերի միջև, ինչը լրացուցիչ գործիք կլինի աղմուկի հնարավոր ազդեցության կառավարման և տեսողական բացասական ազդեցության բարելավման ուղղությամբ:

Շինտեխնիկայի առաջացած թրթռման մակարդակը զգալի չէ, թրթռման արագությունը շին հրապարակից դուրս մարում է:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխման կամ մեղմացման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝

✓ շինարարական աշխատանքների ժամանակ շինհրապարակը ջրցանել ջրցան մեքնայով,

✓ պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի տեխնիկական վիճակը,

✓ արգելել անսարք տեխնիկայի շահագործումը շինհրապարակում,

✓ ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,

✓ շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,

✓ օգտագործել միայն բարձր որակի դիզվառելիք,

✓ բեռնատար մեքենաների անվադողերը լվանալ շրջանառու ջրի համակարգով լվացման կետում,

✓ շինհրապարակի հարակից տարածքում նախատեսել բիոզուգարաններ,

✓ շինհրապարակն ամբողջությամբ ցանկապատել՝ բացառելու նպատակով շինհրապարակից դուրս տարածքների աղտոտումը, ինչը կարող է ծառայել որպես աղմուկի մեղմման էկրան,

✓ շինհրապարակում և հարակից տարածքներում իրականացնել, մթնոլորթային օդի և աղմուկի մշտադիտարկումներ՝ մոնիթորինգի ծրագրին համաձայն:

Քանի որ գործունեության ենթակա տարածքը գտնվում է Զանգեզուրի պղնձա-մոլիբդենայի կոմբինատի տարածքում, ուստի կենսաբազմազանությունը չի դիտարկվում /ՇՄԱԳ հաշվետվության Հավելվածներում ներկայացված է հարակից տարածքների կենսաբազմազանության մոնիթորինգի վերաբերյալ տվյալներ/: Ընկերությունը կենսաբազմազանության կառավարման պլանի շրջանակներում իրականացնում է պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ շրջակա տարածքներում, մասշտաբային կանաչապատման աշխատանքներ, միգրացիոն ուղիների միացումներ և այլն: Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, էկոհամակարգերը և պատմամշակութային հուշարձանները:

Խտացման տեղամասի շահագործման փուլի ջրամատակարարումն իրականացվելու է կոմբինատի ջրամատակարարման ցանցից: Ընդամենը խմելու-կենցաղային կարիքների համար ջրի ծախսը կկազմի 330.2 մ³/տարի: Առաջացած կեղտաջրերն ուղղվելու են ստորգետնյա լցարան: Կեղտաջրերը՝ 311.9 մ³/տարի ծավալով պարբերաբար հեռացվում են լցարանից աղբահան մեքենայով և տեղափոխվում մոտակա անբնակավայր: Երկրաջրերի և օդի մոնիթորինգը կկատարվի ըստ հետևյալ հաշվարկի:

Նախագծի իրականացման դեպքում շրջանառու ջրի օգտագործումը կկազմի՝ 20.6 մլն.մ³: Հաշվի առնելով, որ արտադրամասի համար նախատեսվում է նաև լրացուցիչ 94.1 հազ.մ³/տարի ծավալով թարմ տեխնիկական ջուր (թարմ տեխնիկական ջրի անհրաժեշտությունը



կկազմի 20600.0–94.1=20505.9 հազ.մ³/տարի: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացվել է ջրային ռեսուրսների վրա ազդեցության հաշվարկային համեմատական վերլուծություն՝ ներկա վիճակում և նախագծի իրականացման դեպքում

1.Գոյություն ունեցող վիճակ

- Պոչամբար ուղղվող խյուսում ջրի քանակը կազմում է 68655.4 հազ.մ³/տարի,
- պոչատարից ջրի կորուստը՝ 136.4 հազ.մ³/տարի,
- գոլորշիացման և ներծծման պատճառով պոչամբարից ջրի կորուստը կազմում է 2684 հազ.մ³/տարի, պոչամբարում խոնավ պոչերի հետ մնում է 16549.0 հազ.մ³/տարի,
- պոչամբարի դրենաժից ջրի օգտագործում՝ 6 հազ.մ³/տարի,
- դեպի Աճանան գետ հոսքաջրերի քանակը կկազմի՝ $68655.4 - 136.4 - 2684.0 - 16549.0 - 6 = 49280.0$ հազ.մ³/տարի:

2.Նախագծի իրականացումից հետո

- պոչամբար ուղղվող խյուսում ջրի քանակը՝ կազմում է 48149.4 հազ.մ³/տարի, պոչատարից ջրի կորուստը՝ 96.4 հազ.մ³/տարի,
- գոլորշիացման և ներծծման պատճառով պոչամբարից ջրի կորուստ՝ 2684 հազ.մ³/տարի, պոչամբարում խոնավ պոչերի հետ մնում է 16549.0 հազ.մ³/տարի,
- պոչամբարի դրենաժից ջրի օգտագործում՝ 6 հազ.մ³/տարի,
- դեպի Աճանան գետ հոսքաջրերի քանակը կկազմի $48149.4 - 96.4 - 2684.0 - 16549.0 - 6 = 28814.0$ հազ.մ³/տարի

Շրջանառու ջրի օգտագործումը կազմում է 30%: Հաշվի առնելով, որ պոչամբարից ջրի կորուստը (գոլորշիացման, ներծծման պատճառով և խոնավ պոչերի հետ) մնում է անփոփոխ՝ պոչամբարից գետ թափվող հոսքաջրերի բաժնեմասը նվազում է 41.5 %-ով՝ $(49280 - 28814) \times 100 / 49280 = 41.5\%$:

Այսպիսով, նախագծով նախատեսվում է կազմակերպել արտադրական ջրերի մասնակի շրջանառու համակարգ՝ հարստացուցիչ ֆաբրիկայի պոչերի 50%-ն ուղղել նոր կառուցվող խտացման հանգույց: Խտացման արդյունավետությունը բարձրացնելու համար, նախատեսվում է խյուսին ավելացնել ֆլուկուանտ՝ օգտագործելով՝ <<Praestol 2530>>-ը, ինչը թույլ կտա արագացնել մասնիկների նստեցումը: Խտացման հանգույցի տարածքում տեղադրվող ֆլուկուանտի պատրաստման տեղամասից, լուծույթի պատրաստման արդյունքում մթնոլորտ կարող է արտանետվել դիհիդրոսուլֆիդ: Վնասակար նյութերի արտանետումը մթնոլորտ իրականացվելու է օդափոխության համակարգի միջոցով: Դիհիդրոսուլֆիդի արտանետումների քանակը կկազմի՝ 0,0230000գ/վրկ, կամ 0,725328 տ/տարի: Մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են «Էկոլոգ 4.6» համակարգչային ծրագրով՝ մեկ արտադրական հրապարակի համար: Վնասակար նյութերի մերձգետնյա կոնցենտրացիաները որոշվել են ինչպես հաշվարկային հարթակի մակերեսով, այնպես էլ հաշվարկային կետերում (որոնք գտնվում են մոտակա բնակելի տարածքում): Մթնոլորտ վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքում հաստատված է, որ սպասվելիք մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են սահմանված նորմերում: Դիհիդրոսուլֆատի աղտոտվածության մակարդակն արտադրության գոտու եզրագծում կկազմի 0.000889-0.01 ՍԹԿ միավոր, իսկ մոտակա բնակելի գոտում 0.12-0.17 ՍԹԿ միավոր: Մթնոլորտ վնասակար նյութերի ցրման մեքենայական հաշվարկների արդյունքում հաստատվել է, որ մոտակա բնակելի հատվածում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը չեն գերազանցում սահմանված նորմերը (համաձայն՝ ՀՀ կառավարության 02.02.2006 թվականի № 160-Ն որոշման):

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ արտանետումների նվազեցմանն ուղղված միջոցառումները ներառում են.



- ուժեղացնել հսկողությունը տարվող աշխատանքների ռեժիմի նկատմամբ,
- արգելել սարքավորումների, տեխնիկայի աշխատանքը գերբեռնվածության ռեժիմով,
- վերահսկել տեխնոլոգիական գործընթացները:

Հաշվետվությունում ներկայացվել է խտացման համալիրի շահագործման ընթացքում թափոնների քանակի, դասակարգման և կառավարմանն ուղղված միջոցառումներ: Ինչպես շինարարության, այնպես էլ արտադրամասի շահագործման ընթացքում առաջացող թափոնների քանակը, վտանգավորության դասակարգումը ներկայացված է համաձայն շրջակա միջավայրի նախարարի 25 դեկտեմբերի 2006 թվականի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» №430 հրամանի և Բնապահպանության նախարարի 26 հոկտեմբերի 2006 թվականի № 342 հրամանի հավելվածին համապատասխան:

Շահագործման փուլում աղմուկի աղբյուր են հադիսանում տեխնոլոգիական սարքավորումները և օդափոխման համակարգերը: Կատարվել են աղմուկի մակարդակի հաշվարկներ «ԱՐՄ ակուստիկա» մասնագիտացված ծրագրային համալիրի միջոցով: Հաշվարկային կետերում ձայնի մակարդակը գնահատելիս հաշվի է առնվել բոլոր աղբյուրներից ստացված ընդհանուր ազդեցությունը, տեղանքը, միջավայրի կլիմայական պարամետրերը, խոչընդոտները: Որպես հաշվարկային կետեր ընտրվել են №2 դպրոցի և Լեռնագործների փողոց, 21 հասցեում գտնվող բնակելի շենքի տարածքն ու մարզադաշտը, որտեղ իրականացվել են ակուստիկ ազդեցության հաշվարկներ: Համաձայն հաշվարկների արդյունքների՝ դիտարկված կետերում աղմուկի մակարդակի նորմաների գերազանցում չի դիտարկվել: Շահագործման ժամանակահատվածում թրթռման աղբյուր են հանդիսանում պոմպերը և օդափոխիչները: Պոմպերը տեղադրված են լինելու առանձին քարե շենքում իսկ օդափոխիչները կահավորված են լինելու թրթռամարիչներով՝ տեղադրված պատյանների մեջ, ինչը զգալիորեն կկլանի թրթռման տատանումները:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացվել է բնապահպանական կառավարման պլան շահագործման և շինարարության ժամանակահատվածների համար, որում ներառվել են արտադրական հրապարակի և հարակից տարածքներում հնարավոր ազդեցությունների կանխարգելմանն ու կառավարմանն ուղղված բնապահպանական միջոցառումները: Նախատեսվել են նաև հնարավոր վթարների առաջացումը կանխելու և դրանց հետևանքները նվազեցնելու միջոցառումներ:

Կոմբինատի գործող մոնիտորինգի ծրագրում ընգրկված են այն մշտադիտարկման կետերը, որոնք կբնութագրեն նաև նախագծվող արտադրական տեղամասի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա (ներառում են՝ մակերևութային ջրերը, ստորգետնյա ջրերը, մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, աղմուկը, տարածքի կենսաբազմազանության ուսումնասիրությունը): Մոնիթորինգի ծրագրում լրացուցիչ ավելացվել է նաև նոր խտացուցիչի հարակից տարածքում հոտի առկայության ուսումնասիրություն/չափում՝ շրջակա տարածքներում հոտի տարածումը պարզելու և անհրաժեշտության դեպքում կանխարգելիչ միջոցառումներ նախատեսելու նպատակով: արտադրական գործընթացների ընթացքում Կոմբինատի կողմից իրականացվող մշտադիտարկումների տարեկան ծախսը գնահատվել է 12.045.000 ՀՀ դրամ:

Կոմբինատի կողմից նախատեսվում է իրականացնել երկշերտ պաշտպանիչ ծառատունկի տեսքով կանաչապատման աշխատանքներ արտադրական և հարակից տարածքներում՝ բնակելի տարածքների ուղղությամբ, ինչը նույնպես բնապահպանական և սանիտարական նշանակություն (նաև՝ աղմուկի տարածումը կանխելու տեսանկյունից) և կծառայի որպես քամիներից պաշտպանություն:



Պատճառաբանական մաս. Նախագծի իրականացման արդյունքում սպասվում է դրական ազդեցություններ՝ ինչպես շրջակա միջավայրի, այնպես էլ սոցիալական միջավայրի վրա:

Շրջանառու ջրի համակարգը թույլ կտա՝

- Կրճատել թարմ տեխնիկական ջրի ծախսը,
- Նվազացնել արտադրական կեղտաջրերի արտահոսքը բաց ջրավազան և բաց ջրավազաններ թափվող հնարավոր աղտոտող նյութերի քանակը,
- Նվազեցնել բեռնատվությունը «Արծվանիկ» պոչամբարի վրա,
- Նվազեցնել շրջակա միջավայրին հասցվող սոցիալ-տնտեսական վնասը,
- բացահանքի ջրերն ուղղել խտացուցիչի նոր տեղամաս և պարզվածքի հետ համատեղ հարստացուցիչ ֆաբրիկայի շրջանառու ջրի համակարգի ռեզերվուարներ,
- բացառել բացահանքի ջրերի արտահոսքը բաց ջրային ռեսուրսներ:

Ջրի շրջանառու համակարգի իրականացման և ներդրման արդյունքում ֆաբրիկայում կկրճատի 20 527 900 մ³ ծավալով թարմ ջրի ծախսը, ինչը կարող է հանգեցնել ազդակիր համայնքում (ք. Քաջարան) սոցիալական վիճակի բարելավմանը՝ ոռոգվող հողատարածքների մակերեսների ավելացմանը: Արդյունքը դրականորեն են ազդելու ընկերության բնականոն գործունեության վրա, քանի որ եղանակային սակավաջուր անբարենպաստ պայմաններում ընկերությունն ապահովված է լինելու ջրի անհրաժեշտ քանակով և նվազելու են պաշտարով Արծվանիկի պոչամբար լցվող վտանգավոր նյութերի քանակը: Համաձայն ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ Կոմբինատը պայմանագրեր է կնքել մի շարք կլինիկաների և հիվանդանոցների հետ՝ աշխատակիցների բուժսպասարկումն ապահովելու համար, ստեղծել է տարբեր սպորտային միջոցառումների ծրագրեր:

Փորձաքննության փուլում Օրենքով սահմանված կարգով Սյունիքի մարզի Քաջարան քաղաքում անցկացված հանրային լսումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: 2-րդ հանրային լսման ընթացքում մասնակիցների կողմից բարձրացվել են հարցեր արտադրական գործընթացի ընթացքում հոտի, աղմուկի և փոշու /ինչն առաջանում է բացահանքից և լցակույտերից/ հնարավոր ազդեցությունների վերաբերյալ, որոնք հաշվի են առնվել նախաձեռնողի կողմից, ներկայացվել են լրացուցիչ հիմնավորումներ (գրավոր, բանավոր) և փորձաքննական եզրակացությունում ամրագրվել են որպես պարտադիր կատարման ենթակա փորձաքննական պահանջներ:

Փորձաքննական գործընթացում հաշվի են առնվել ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ գործընթացի մասնակիցների՝ շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, առողջապահության, ներքին գործերի, ԿԳՄՍ նախարարություններից, կադաստրի կոմիտեից և Սյունիքի մարզպետարանից և Քաջարանի համայնքապետարանից ստացված կարծիքները: Եզրակացությունը կազմելիս հաշվի են առնվել նաև հանրային լսումների արդյունքները:

Հաշվետվությունում նախատեսված կանոնավոր մոնիթորինգի (բաց ջրավազաններ, մթնոլորտային օդի և հողի որակ, աղղեցության ենթակա բնակելի տարածքներ, կենսաբազմազանություն և այլն) միջոցառումների իրականացումը թույլ կտան արագ արձագանքել և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ շրջակա միջավայրի աղտոտումները կանխելու համար:

Փորձաքննական պահանջներ

1. Գործունեության իրականացման ընթացքում, **նախագծման** նորմատիվներին և բնապահպանական պահանջներին **համապատասխան** ապահովել տեխնոլոգիական լուծումները և ՇՄԱԳ հաշվետվությունում **ներկայացված**



Բնապահպանական միջոցառումների իրականացումը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական և շահագործման հետ կապված բոլոր նորմերն ապահովելու համար:

2. Քանի որ շրջանառու ջրամատակարարման համակարգը հանդիսանում են պոչամբարային տնտեսության բաղկացուցիչ մաս, անհրաժեշտ է պոչամբարի ենթակառուցվածքների փոփոխված նախագծի փաթեթը ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

3. Շինարարության և շահագործման փուլերում ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունները բացառելու նպատակով, անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի N 64-Ն որոշման պահանջներով՝ ապահովելով վթարային արտահոսքերի հավաքման, հեռացման հարմարանքների անխափան աշխատանքը, բացառել և նվազացնել արտադրական կեղտաջրերի արտահոսքը ջրային ռեսուրսներ (Ողջի գետ) և բաց ջրավազաններ թափվող աղտոտող նյութերի քանակը:

4. Խտացման արտադրական տեղամասում ապահովել շինարարության և շահագործման փուլերի համար նախատեսված մշտադիտարկումների իրականացումը և հաճախականությունը՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներին համապատասխան, ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված շրջակա միջավայրի բաղադրիչների մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

5. Խտացուցիչի շահագործման փուլում՝ որպես կարևորագույն պայման, անհրաժեշտ է հարակից արտադրական տարածքներում ստուգիչ սարքի միջոցով իրականացնել հոտի առկայության ուսումնասիրություն/չափում և ըստ անհրաժեշտության նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ հոտի ազդեցությունը նվազեցնելու և թույլատրելի մակարդակում ապահովելու համար:

6. Շինարարության փուլում շինարարական հրապարակից դուրս փոշու տարածումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով (ըստ անհրաժեշտության ցանկապատել շինարարական հրապարակը, ջրցանել, սորուն նյութերը և հողային զանգվածները ծածկել անթափանց թաղանթով, բացառել շինարարական աղբի կուտակումները տարածքում, շինարարական աղբը և սորուն նյութերը տեղափոխել փակ ծածկով մեքենաներով՝ հատուկ սահմանված երթուղիներով, հատուկ վայրեր և այլն):

7. Արտադրական տարածքում շինարարության և շահագործման փուլերում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան (վտանգավոր թափոնների գործածությունը՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեություն, իրականացնել համապատասխան լիցենզավորված կազմակերպության կողմից):

8. Նոր պայմաններով ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել շրջակա միջավայրի նախարարություն:

9. Արտադրական տարածքում անհրաժեշտ է ապահովել ՇՄԱԳ հաշվետվությամբ նախատեսված պաշտպանիչ շերտով ծառատունկի իրականացումը:

10. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ղեկավարվել առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի թիվ 51-Ն և 2002 թվականի մարտի 6-ի թիվ 138 հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:



ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՄԿ» ՓԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված «Շրջանառու ջրամատակարարման համակարգի վերակառուցում» նախագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝

Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հրոիքնազ Մկրտչյան